ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» սեպտեմբերի 2014 թվականի N 135 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքային ենթակայության մարզադպրոցներում երկար տարիներ չեն կատարվել շինվերանորոգման աշխատանքներ, որի պատճառով մարզադպրոցներում ստեղծվել է խիստ անմխիթար վիճակ, հատկապես ձմռան ամիսներին անհնար է դարձել մարզումների կազմակերպումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ելնելով խնդրի անհապաղ լուծման անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրու համայնքային ենթակայության թվով 14 (տասնչորս) մարզադպրոցներին շինվերանորոգման աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու նպատակով հատկացնել դրամական միջոցներ 6.000.000 (վեց միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ (19) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա. Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«30» սեպտեմբերի 2014 թ.